ML MINING

ՄԼ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ
21/3 Ն.Ադոնց փող, Երևան, ՀՀ

ML MINING LLC
21/3 N.Adonts str, Yerevan, RA

09 փետրվար 2026թ.

N 55

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

Մեր ընկերությունը Եղվարդի հրաբխային խարամի հանքավայրի Արևմտյան տեղամասում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 21.06.2022թ.-ի N29/682 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանին համաձայն աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. արտադրական հրապարակի տարածքի մոնիթորինգ՝ օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով,

2. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

3. լցակույտում պահպանվող ապարների մոնիթորինգ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,

4. հանքի հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում,

5. աղմուկի մակարդակի մոնիթրինգ աշխատանքային գործընթացի ժամանակ:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Եղվարդի հանքավայրի Արևմտյան տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ

գլխավոր տնօրեն Է. Մարգարյան

(+374) 10 200 004 mlmining.am mlmining@mail.ru

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Միջին ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականությունը | Միջինացված արդյունքը[1] |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ | Տեղամասի տարածք | Անօրգանական փոշի ($SiO_2$ 20-70% ) | Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.03մգ/մ³ |
| Հողային ծածկույթ | Արտադրական հրապարակի տարածք | Նավթամթերք-ներ | Դիտարկում, նմուշարկում | 2025 թվականի դեկտեմբեր, տարեկան մեկ անգամ | Արտահոսքի հետքեր չեն հայտնաբերվել |
| | Լցակույտ | Հումուսի պարունակու-թյուն | Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն | 2025 թվականի դեկտեմբեր, ամսական մեկ անգամ | 1.7% |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Արևմտյան տեղամասի և հարակից տարածք | Տեսակային կազմի | Դիտարկում, նկարագրու-թյուն | 2025 թվականի դեկտեմբեր, տարեկան մեկ անգամ | Նշվել է Capparis spinosa, Festuca vale-siaca, Helichrysum, Ar-temisia fragrans, Kochia prostrata, Rosa canina: Դիտվել է մոխրագույն ագռավի և կաչաղակի թռիչք: Արձանագրվել են դաշտամկների |

[1]Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բազմաթիվ բներ: |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մակերևութային ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Աղմուկ և թրթռում | Արդյունահանման աշխատանքների վայր | Աղմուկի մակարդակ | Չափում ավտոմատ սարքերով | 2025 թվականի դեկտեմբեր, տարեկան մեկ անգամ | 63դԲԱ (էքսկավատորի և բեռնատարի աշխատանքի ընթացքում) |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ | | | | |
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում նավթամթերքների պահեստարաններ չկան | | | | |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապ-ված ենթակառուց-վածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան | | | | |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգումը | | | | |